

սոյ հայ արքեպիսկոպոսին գործերը աւելի գիւրութեամբ կարգադրել, որոնց մասին գրած էր Սպահանէն Հ. Դիմաս Բոկոտն Կարմեղեան առ Նորին Սրբութիւն յանձնարարութեամբ Տեառն Մովսէս արքեպիսկոպոսի որուն հաճէր Չ. Տ. ըսել թէ Սուրբ Միութեան սեսակէտով Լէոպոլսինը կարող է պատճառել իրեն լիուրի բաւականութիւն :

Ինչ կը վերաբերի Հոգեւոր Դպրանոցի (Seminario), որ պիտի բացուի հայ ազգին համար ի Հոռոմ, եւ կայաններուն, գորոնք կը փափագին ունենալ հայ վաճառականներն եւ ի մասնաւորի պր. Սոջա Նազար, այս մասին յիշեալ Հայրն Յովհաննէս պիտի գնէ Չեր Տէրութեան առջեւ ճշգրտօրէն այն որոշումները, գորոնք ըրին Տ. Հ. այս սուրբ Ժողովս եւ Նորին Սրբութիւնը :

Նորին Սրբութիւնը պատիւ ընելու համար գլխաւորաբար վերոյիշեալ Մովսէս արքեպիսկոպոսին եւ Չեր Տէրութեան, ինչպէս նաեւ այն միւս վարդապետներուն եւ հայ ժողովրդեան, որոնք, ինչպէս Չեր թղթին մէջ կը գրէիք թէ յիշեալ Հայրը շատ կը սիրեն, ուղեց գանիկա եպիսկոպոսական աստիճանի բարձրացնել եւ անոր յառաջացած տարիքը նկատի առնելով տալ անոր օգնական մը, այսինքն զՏէր Ֆրա Տիմոթէոս եպիսկոպոս Բաղդատի : Նորին Սրբութիւնը հրամայեց ինձ որ զանոնք առանձնապէս յանձնարարեմ Չեր Տէրութեան եւ խնդրեմ միանգամայն Ձեզմէ, գոր ի բոլոր սրտէ կը մաղթեմ, որպէս զի նպաստամատոյց